08/02/2019թ.
Ժամը 11:00

թիվ՝ 5

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովի անդամներ
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահ Ն. Գասպարյան

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Ջի Թի Սի ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր տեխնիկական բնութագրում՝ 79-րդ, 96-րդ և 112-րդ չափաբաժինների մասով, հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունները:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը ի պատասխան տրված եզրակացության համաձայն Մաունթ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 2018/12/18-ի, դրությամբ, ունեցել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը գերազանցող հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Ընդունել որոշում՝ կողմ ***3 (երեք)*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

2. Մերժված հայտերի, չկայացած չափաբաժինների և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

2.1 Գնահատող հանձնաժողը ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 7.11-րդ կետի դրույթներով որոշեց՝ մերժել Մունթ ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ Մաունթ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 2018/12/18-ի, դրությամբ, ունեցել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը գերազանցող հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 14 մայիսի 2017 թվականի թիվ 534-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ»-ի /այսուհետ՝ Կարգ/ 20-րդ և 21-րդ կետերի դրույթներով որոշեց՝ հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել ծանուցել Մաունթ ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում, ինքնուրույն կամ Կոմիտեի միջոցով ներկայացնել Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունից տարբերվող այլ լրացուցիչ տեղեկատվություն, որում կներքվի Մաունթ ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հանգամանքը:

2.2 Քանի որ 92-րդ չափաբաժնի մասով Մաունթ ՍՊԸ-ից հետո հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Արմեն Լևոնյան ՍՊԸ-ն գահատող հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել՝ ծանուցել Արմեն Լևոնյան ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային

...վա ընթացքում ներկայացնել 92-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունել որոշում՝ կողմ *3 (երեք)* դեմ *0 (զրո)* ձայներով

3 Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 Հաշվի առնելով սույն արձանագրության 1.1-ին կետը, գնահատող հանձնաժողովի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակիցների մասնակցության իրավունքին, որակավորման ու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությանը հրավերի պահանջներին գնահատման թերթիկներով տրված գնահատականները, գնումների մասին << օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ *3 (երեք)* դեմ *0 (զրո)* ձայներով .

Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել

- Ջի Թի Սի ՍՊԸ-ին 79-րդ, 96-րդ և 112-րդ ոդ չափաբաժինների մասով

Սույն կետում նշված չափաբաժինների համար Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 10 օրացույցային օր անգործության ժամկետ:

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան

հանձնաժողովի անդամներ
/դեղագործ/ Ս. Անանյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան